# ՎՐԱՍՏԱՆ

«ՎՐԱՍՏԱՆ» (ԱՎԺԱՐՈՏՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 17 - 18 (16412) ՇԱԲԱԹ, 5 ՄԱՐՏԻ 2016 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ


ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

## ԿՆԵՐԿԱՅԱՑՎԻ ԵՐԿՐԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

***Մարտի 1-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին մասնակցեց «Արտադրի՛ր Վրաստանում» պետական ծրագրի նոր՝ «Ընդունի՛ր Վրաստանում» բաղադրիչի շնորհանդեսին:***

Ելույթ ունենալով միջոցառմանը՝ վարչապետը նշեց, որ, մշակված ծրագրի համաձայն, գործադիրը մտադիր է կտրուկ բեկում առաջացնել երկրի ենթակառույցների զարգացման գործում: «Դա կլինեն բացարձակապես նոր ճանապարհներ, ավտոմայրուղիներ, որոնք կապահովեն տարանցիկ փոխանցումների արագ իրականացմանը»,- հայտարարեց վարչապետը:

Նրա խոսքերով, կառավարությունը մոտ ժա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

## ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՍՏԵՂԾՎՈՒՄ Է ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***Ինչպես արդեն հաղորդել ենք, փետրվարի 27-ին, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու նախագահությամբ, անցկացվեց երկրի ազգային անվտանգության խորհրդի նիստ, որին ներկա էր նաեւ վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին:***

Նիստում լսեցին Վրաստանի պաշտպանության նախարար Թինա Խիդաշելու եւ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Վախթանգ Կապանաձեի զեկույցները: Հենվելով դրանց վրա՝ նիստում որոշում ընդունվեց երկրի զինված ուժերի համակարգում հիմնել նոր կառույց, ըստ որի, Վրաստանում ստեղծվում են Արեւմտյան եւ Արեւելյան հրամանատարություններ:

Ինչպես հայտարարեց Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, նիստում որոշում է ընդունվել նախապատրաստական աշխատանքներ իրականացնել ՆԱՏՕ-ի առաջիկա գագաթաժողովին մասնակցելու համար:

Զինված ուժերի նոր կառույցի հրամանագիրը հաստատվելու է նախագահի կողմից:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

## ՀԵՆԶԵԼ ՄԿՈՅԱՆ. «ԻՆՁ ՀԱՄԱՐ ԱՌԱՋՆԱՅԻՆԸ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՆ ԽՐԱԽՈՒՍՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՎՈՒՄՆ Է»

***Յուրաքանչյուր մարդու, առավել եւս՝ պաշտոնատար անձի, որոշակի պարտականություն եւ պատասխանատվություն է սահմանվում նրա գործունեության շրջանակներում: Պատասխանատվության մակարդակը անհամեմատ ավելի բարձր է, երբ խոսքը վերաբերում է ժողովրդական ընտրյալին, պատգամավորին: Այդ առումով, Նինոծմինդայի մունիցիպալիտետից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանը այն բացառիկներից է, ով ոչ միայն չի խուսափել, այլեւ պատրաստակամորեն ընդառաջվել է ստանձնած պարտավորությունների կատարմանը: Ընտրողների առջեւ պարզերես ներկայանալը նրա համար առավել նշանակալից է, քանի որ նա այդ մունիցիպալիտետից արդեն չորրորդ գումարման խորհրդարանի անընդմեջ մեծամասնական եւ նորանկախ Վրաստանի խորհրդարանական կյանքում յուրօրինակ ռեկորդ սահմանած պատգամավորն է:***

2015 թվականին Նինոծմինդայի մունիցիպալիտետի իրականացված աշխատանքների, տեղի ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության եւ առաջիկա ծրագրերի մասին մեր հարցերին պատասխանում է Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Հենզել Մկոյանը:

- ***Պարոն Հենզել, որքանով տեղեկացված ենք, Ձեզ համար ավանդույթի ուժ է ստացել անցած տարվա կատարածի հաշվետվությամբ ընտրողների առջեւ ելույթ ունե-***

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

## ԼԵՅԼԱ ՄԿՐՏՉՅԱՆԸ՝ ՊԱՏՎՈ ՇՔԱՆՇԱՆԻ ԱՍՊԵՏ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու՝ փետրվարի 17-ի հրամանագրով, թատերական արվեստի ժողովրդականացման, վրաց-հայկական մշակութային հարաբերությունների զարգացման գործում ներդրած ավանդի եւ արգասաբեր ստեղծագործական գործունեության համար, Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի դերասանուհի Լեյլա Մկրտչյանը պարգեւատրվել է Պատվո շքանշանով:

***«Վրաստան» թերթի խմբագրությունը ի սրտե շնորհավորում է Հայաստանի թատերական «Արտավազդ» մրցանակի դափնեկիր եւ ոսկե մեդալակիր Լեյլա Մկրտչյանին բարձր պարգեւի համար եւ մաղթում առողջություն, երջանկություն ու նորանոր դերեր:***

## ՄԱՐՏԻ 3-Ը՝ ՄԱՅՐԵՐԻ ՕՐ, ՄԱՐՏԻ 8-Ը՝ ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ

### ՇՆՈՐՀԱՎՈՐՈ՞ՒՄ ԵՆՔ

***Այս գեղեցիկ տոների առթիվ, սիրելի՞ մայրեր, քույրեր, տատիկներ, ընկերուհիներ, հարգարժա՞ն կանայք, ի սրտե շնորհավորում ենք ձեզ, ցանկանում առողջություն, երջանկություն, սեր եւ ամենայն բարիք:***

«ՎՐԱՍՏԱՆԸ» 95 ՏԱՐԵԿԱՆ Է

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ «ՎՐԱՍՏԱՆ» ԹԵՐԹԻ 95-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

***Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում «Վրաստան» թերթի Գլխաւոր խմբագրին, աշխատակիցներին ու ընթերցողներին.***

Վրաստանի հայ համայնքի պատմութեան մէջ գովութեան արժանի վաստակ ունի «Վրաստան» թերթը: Մեր եկեղեցիների, կրթօջախների եւ ազգային հաստատութիւնների կողքին պարբերականը տասնամեակներ շարունակ ծառայում է մեր ժողովրդի զաւակաց ազգային կեանքի շէնացմանը եւ մեր պատմութեանը, լեզուին ու մշակոյթին նուիրուած իր հրապարակումներով նպաստում հայորդեաց հոգիներում ազգասիրութեան ոգու զօրացմանը: Մեզ համար գոհունակութիւն է, որ յատկապէս վերջին տասնամեակներին «Վրաստան» թերթը կարեւոր տեղ է յատկացնում նաեւ Վրաստանի Հայոց թեմի գործունէութեան լուսաբանմանը՝ ի խնդիր վիրահայ Մեր բարեպաշտ զաւակների հոգեւոր վերազարթոնքի:

Մենք բարձրօրէն գնահատում ենք նաեւ, որ «Վրաստան» թերթը իր հիմնադրման օրից ի վեր աւանդ է բերում հայ եւ վրացի հաւատակից մեր ժողովուրդների դարաւոր բարեկամութեան առաւել ամրապնդմանն ու զօրացմանը:

Յոբելեանական տարեդարձի առիթով Մեր մաղթանքն է, որ «Վրաստան» թերթը Տիրոջ օրհնութեան ներքոյ արդիւնաւորութեամբ շարունակի ազգաշահ իր առաքելութիւնը մեր ժողովրդի կեանքում:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ եւ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

***ԳԱՐԵԳԻՆ Բ***
***ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ***

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

## «ԵՍ ԳՏՆՎՈՒՄ ԵՄ ՏԱՆԸ ԵՎ ՑԱՆԿԱՑԱԾ ԴՌԻՌ, ՈՐԸ ԹԱԿԵՄ, ԿԲԱՑՎԻ»

***Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Թենգիզ Շարմանաշվիլին, դիվանագիտության առաքելության ժամկետի սպառման կապակցությամբ, հրաժեշտի հանդիպում ունեցավ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հետ:***

Հայաստանի նախագահը շնորհակալություն հայտնեց Թենգիզ Շարմանաշվիլուն՝ պաշտոնավարման անցած հինգ տարիներին ակտիվ եւ արդյունավետ աշ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

# ԿՆԵՐԿԱՅԱՑՎԻ ԵՐԿՐԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

մանակներում կներկայացնի երկրի ենթակառույցների զարգացման լիարժեք ծրագիրը:

Իր հերթին, «Արտադրի՛ր Վրաստանում» ծրագրի նոր բաղադրիչի շնորհանդեսի մասնակից Վրաստանի էկոնոմիկայի նախարար Դմիտրի Քումցիշվիլին հայտարարեց, որ սույն բաղադրիչը կնպաստի երկրում հյուրանոցային ինդուստրիայի զարգացմանը: Նրա խոսքերով, ծրագրի շնորհիվ գործարարները, որոնք զբաղվում են հյուրանոցային բիզնեսով, կունենան պետությունից 50 տոկոսանոց համաֆինանսավորման վարկեր ստանալու հնարավորություն: Միաժամանակ, պետությունը գործարարներին կաջակցի գործունեության առաջին երկու տարիների ընթացքում որոշակի լիմիտի շրջանակներում միջազգային ասպարեզում ամրանալու հարցում:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

## ՆՈՂԱՐ ԽԱԴՈՒՐԻ. «ԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԴՐԱՄԸ ԼՐՋՈՐԵՆ ԿԱՄՐԱՊՆԴՎԻ»

### ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԵՏ

***- Բատոնո Նոդար, դեռ տարվա սկզբին կառավարությունը հայտարարեց բյուջեում հնարավոր փոփոխությունների մասին: Ե՞րբ եւ ի՞նչ գումարով է ծրագրվում բյուջեի նվազեցումը:***

- Դա, առաջին հերթին, կախված է նրանից, թե ինչպիսին կլինի հարկային համակարգի բարեփոխումը: Մասնավորապես, բյուջեում փոփոխությունները կկատարվեն միայն այն դեպքում, եթե ներդրվի շահութահարկի նոր տարբերակը, որը վերաներդրման դեպքում նախատեսում է շահութահարկի վերացում եւ նաեւ այն դեպքում, երբ շահութահարկը վերջնականապես բաշխվում է դիվիդենտների տեսքով:

Բնականաբար, դա սկզբնական փուլում կնվազեցնի բյուջեի եկամուտները, հետեւաբար նաեւ՝ պետության ծախսերը:

Ֆինանսների նախարարությունում հաշվարկումներ են կատարվում ծախսերի նվազեցման մասշտաբների կապակցությամբ, թեպետ մանրամասների մասին խոսելը դեռ վաղաժամ է:

Պաշտոնապես այդ թեմայի շուրջ կարող ենք խոսել նրանից հետո, երբ խորհրդարանը, թեկուզ առաջին ընթերցմամբ, ընդունի հարկային բարեփոխումը: Ամենայն հավանականությամբ, դա տեղի կունենա գարնանը: Կառավարությունն արդեն հավանություն է տվել օրինանախագծին, այն հրապարակվել է պաշտոնական կայքէջում, եւ բոլորը կարող են դրա հետ ծանոթանալ:

Օրինանախագծի քննարկումները կսկսվեն խորհրդարանական կոմիտեում: Զուգահեռաբար, մենք կշարունակենք խորհրդատվությունը գործարար շրջանների հետ: Կարծում եմ, որ մարտի վերջին փաստաթուղթը պատրաստ կլինի:

Առաջարկություն կա, որ այն կկիրարկենք ընթացիկ տարվա հուլիսի 1-ից, այսինքն՝ տարվա առաջին կեսին կգործի հարկային հին օրենսդրությունը, իսկ երկրորդ կեսին՝ նորը:

***- Ո՞րն եք համարում գործարար շրջաններին գլխավոր ուղերձը:***

- Գլխավորն այն է, որ մենք գործարարներին ասում ենք, որ կհարկադրվի միայն շահույթի այն մասը, որը, կոպիտ ասած, բաշխվում է ընկերության հիմնադիրների միջեւ, իսկ վերաներդրմանն ուղղված միջոցները չեն հարկադրվի:

Մեր հաշվարկներով, դա գործարարներին հնարավորություն կտա տնտեսել 300-400 միլիոն լարի, որը կարելի է օգտագործել գործարարության զարգացման եւ էկոնոմիկայի լրացուցիչ խրախուսման համար:

Բացի այդ, մենք գործարարներին առաջարկում ենք հետաքրքիր եւ գրեթե հեղափոխական փոփոխություններ: Նախ, մենք քաջ գիտակցում ենք, որ օբյեկտի ստուգման համար ֆինանսական ոստիկանությունը գործարարների համար շատ հիմնախնդիրներ է ստեղծում: Ուստի, մեր կողմից ընդունվել է որոշում, ըստ որի, ֆինանսական ոստիկանությունը գործարարության ստուգումներ չի անցկացնի: Մի խոսքով, հարկային ծառա-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

# «ԵՍ ԳՏՆՎՈՒՄ ԵՄ ՏԱՆԸ ԵՎ ՑԱՆԿԱՑԱԾ ԴՌՈՒ, ՈՐԸ ԹԱԿԵՄ, ԿԲԱՑՎԻ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

խատանքի համար: Բարձր գնահատելով եղբայրական Վրաստանի հետ Հայաստանի հարաբերությունների ամրապնդման գործում դեսպանի առաքելությունը՝ Սերժ Սարգսյանը հույս հայտնեց, որ նա, այլ աշխատանքի անցնելուց հետո էլ, կպահպանի կապը Հայաստանի եւ պաշտոնավարման տարիներին ձեռք բերած իր հայ ընկերների հետ: Հայաստանի նախագահը մեծապես կարեւորելով Վրաստանի հետ հարաբերությունները՝ ընդգծեց, որ անհրաժեշտ է ոչ միայն դրանք պահպանել, այլեւ տարեցտարի զարգացնել: Սերժ Սարգսյանը դա հարեւան եւ բարեկամ երկու երկրների պարտականությունն է համարել պատմության առջեւ:

Թենգիզ Շարմանաշվիլին շնորհակալություն հայտնեց Սերժ Սարգսյանին՝ ջերմ խոսքերի ու իր աշխատանքին տված գնահատականի համար եւ վստահեցրեց, որ Վրաստանում՝ ի դեմս իրեն, Հայաստանն այսուհետ կունենա եւս մեկ բարեկամ: «Մեծարգո՛ նախագահ, հիշում եմ, թե ինչպես տարիներ առաջ, պաշտոնս ստանձնելու ժամանակ հավատարմագրերը հանձնելիս, Դուք ինձ ասացիք, որ ես գտնվում եմ տանը, եւ ցանկացած դուռ, որը թակեմ, իմ առջեւ կբացվի: Այդպես էլ եղել է այս տարիներին: Ես տեսել եմ միայն ըմբռնում եւ ջերմություն, ինչի համար չափազանց շնորհակալ եմ»,- Հայաստանի նախագահի հետ հանդիպմանն ասաց Վրաստանի դեսպանը:

# ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ

### ՎՐԱՍՏԱՆԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՍԵՐԳԵԵՆԿՈՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

***Մարտի մեկին Երեւանում աշխատանքն սկսեց «Հանրային առողջապահության նոր մարտահրավերները» խորագրով նախարարական միջազգային համաժողովը, որին, տանտերերից բացի, մասնակցեցին Վրաստանի, Ռուսաստանի, Իրանի, Բելառուսի, Ղազախստանի առողջապահության նախարարությունների պատվիրակությունները: Վրաստանի պատվիրակությունը գլխավորում էր երկրի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական հարցերի նախարար Դավիթ Սերգեեենկոն:***

Մարտի 2-ին, համաժողովի աշխատանքի շրջանակներում, տեղի ունեցավ Վրաստանի եւ Հայաստանի առողջապահության նախարարների երկկողմ հանդիպումը, որի ընթացքում քննարկեցին առողջապահության ոլորտում երկու երկրի համագործակցության ընդլայնմանը վերաբերող մի շարք հարցեր: Մասնավորապես, անդրադարձ է կատարվել փորձի փոխանակման, փոխգործակցության սերտացման նպատակով վրաց-հայկական համաժողովներ անցկացնելու նախաձեռնությանը:

Որպես այս տարի նախանշվող առաջին համաժողովի թեմա՝ ընտրվել է սրտային վիրաբուժությունն ու վնասվածքաբանությունը:

Հայաստանի առողջապահության նախարար Արմեն Մուրադյանը եւ Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական հարցերի նախարար Դավիթ Սերգեեենկոն պատրաստակամություն հայտնեցին հարեւան պետությունների միջեւ առողջապահության ոլորտում արդյունավետ համագործակցությունը խորացնելու նպատակով ներդնել բոլոր անհրաժեշտ ջանքերը:

Հիշեցնենք, որ Հայաստանի առողջապահության նախարար Արմեն Մուրադյանի գլխավորած պատվիրակությունը 2015թ. հուլիսին աշխատանքային այց էր կատարել Վրաստան: Վրացական կողմը հայ գործընկերներին էր ներկայացրել իրենց երկրի առողջապահական փորձը:



ԻՐԱՆ

## ԱՆՑԿԱՑՎԵՑԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Փետրվարի 26-ին Իրանում անցկացվել են խորհրդարանական ընտրություններ, դրանց զուգահեռ՝ Փորձագետների խորհրդի ընտրությունները: Խորհրդարանական ընտրությունների արդյունքների համաձայն, նախագահ Հասան Ռոուհանիի կողմնակիցներն ստացել են Թեհրանից բոլոր 30 պատգամավորական մանդատները: Բացի այդ, Իրանի նախկին եւ գործող նախագահներ Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանին (1989-1997 թթ.) եւ Ռոուհանին առավել մեծ թվով ձայներ են ստանում երկրի Փորձագետների խորհրդի ընտրություններում:*

*Իրանի ներքին գործերի նախարարը հայտարարել է, որ երկրում անցկացված ընտրություններին մասնակցությունը կազմել է 62 տոկոս, ընդամենը քվեարկել է 34 միլիոն մարդ:*

ԹՈՒՐՔԻԱ

## ԱՐԳԵԼՔ՝ ՆԱՏՕ-Ի ՆԱՎԵՐԻՆ

*Թուրքիան ՆԱՏՕ-ի նավերին թույլ չի տվել մտնել էգեյան ծովում իր ջրերը: Դաշինքի առաքելությունը կայանում էր Թուրքիայից Հունաստան եւ հետո եվրոպական այլ երկրներ ուղեւորվող անօրինական միգրանտներով նավակներին բռնելը:*

*Թուրքիան համառում է այն բանում, որպեսզի, նավերի տեղակայման շրջանները որոշելու համար, ՆԱՏՕ-ի ծովային խմբավորման գերմանացի հրամանատար Յորգ Կլայնը ժամանի Անկարա, ինչը դաշինքը հրաժարվում է կատարել:*

ԱՄՆ

## ՄԵԿ ՏԱՐՈՎ ԵՐԿԱՐԱՑՎՈՒՄ ԵՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ

*ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման հրամանագիր է ստորագրել Ռուսաստանի նկատմամբ այն պատժամիջոցները մեկ տարով երկարացնելու մասին, որոնք երկու տարի առաջ սահմանվել էին Ուկրաինայում Ռուսաստանի գործողությունների պատճառով:*

*Պատժամիջոցների սահմանման պատճառների թվում նշվում են Ռուսաստանի կողմից Ղրիմի բռնակցումը, ուժի կիրառումն Ուկրաինայում եւ այնտեղ ժողովրդավարական գործընթացները խափանելու փորձերը:*

*Ինչպես ասված է փաստաթղթում, քանի որ Ռուսաստանի Դաշնության կողմից Ուկրաինայի նկատմամբ գործողությունները շարունակում են արտակարգ վտանգ ներկայացնել ԱՄՆ-ի ազգային անվտանգության եւ արտաքին քաղաքականության համար, Ռուսաստանի նկատմամբ սահմանված պատժամիջոցները կերկարացվեն եւս մեկ տարով:*

ՈՒԿՐԱԻՆԱ

## ԳՐԻՊԻ ՁՈՀ է ԴԱՐՁԵԼ 346 ՄԱՐԴ

*Ուկրաինայում 346 մարդ դարձել է գրիպի համաճարակի զոհ՝ հիվանդության սեզոնային բռնկման ընթացքում: Այս մասին հայտնել է Ուկրաինայի առողջապահության նախարարության մամուլի ծառայությունը:*

*«2015 թվականի 40-րդ շաբաթվանից սկսած՝ Ուկրաինայում արձանագրվել է 346 վիրուսոլոգիապես հաստատված մահ գրիպի հետեւանքով: Դրանցից 80,9%-ի դեպքում արձանագրվել է H1N1՝ խոզի գրիպ»,- նշել են նախարարությունում:*

## Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

### ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՆՈՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ»

*«Վրացական երազանք» կոալիցիայի կազմի մեջ ընդգրկված հանրապետական եւ «Արդյունաբերությունը կփրկի Վրաստանը» կուսակցությունների միջեւ վերջին ժամանակներս տեղ գտած դիմակայության առիթով, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հանդես եկավ հատուկ հայտարարությամբ, որտեղ քաղաքական գործընկերներին կոչ արեց բոլոր վիճելի հարցերը լուծել կոալիցիայի ներսում:*

Հակառակ դեպքում, ինքը՝ որպես երկրի վարչապետ ու կոալիցիայի լիդեր, ստիպված կլինի իրականացնել փոփոխություններ, որոնք կապահովեն կառավարության կայուն աշխատանքը եւ կնպաստեն առողջ շրջանակներում քաղաքական գործընթացների զարգացումը:

Վրաստանի վարչապետի խոսքերով, «Վրացական երազանքը» կհամագործակցի բոլոր այն քաղաքական կուսակցությունների հետ, որոնք ընթանում են զարգացման գործընթացին համապատասխան, եւ ում համար եվրոպական քաղաքական միտումը կենսական նշանակություն ունի:

Միաժամանակ, վարչապետը նշեց, որ նորացման գործընթացը կենսական կարեւոր նշանակություն ունի, թեպետ դա չի նշանակում, որ պետք է մոռացության մատնվեն առանձին անհատների ծառայությունները: «Վրացական երազանքը» այն քաղաքական ուժն է, որը, հենվելով ազգային ինքնության վրա, ապահովում է մեր երկրի եվրոպական եւ եվրատլանտյան ապագան»,- նշված է վարչապետի հայտարարության մեջ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

### ՀԻՄՆՎԵՑ «SALVE» ՀԻՄՆԱԴՐԱՄԸ

*Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին, Ֆրանսիա-Վրաստան առեւտրաարդյունաբերական առեւտրական պալատի նախագահ Անտուան Բարդոնի հետ միասին, հիմնեց «Salve» հիմնադրամը: Արդեն հայտնի են հիմնադրամի առաջին հանգանակողները: Դրանք Վրաստանում Ֆրանսիայի նախկին դեսպան Ռենո Սալենսը եւ Վրաստանում գործող ֆրանսիացի վրաց ու ամերիկացի գործարարներն են:*

Հիմնադրամը ունի երկու կոնկրետ նպատակ՝ փողոցներում ապրող եւ աշխատող երեխաների համար նախագծերի ֆինանսավորումը, սոցիալապես անպաշտպան նորածինների սննդի պակասորդի վերացման աջակցությունը:

«Ֆրանսիացի բարեկամների հետ միասին այսօր հիմնեցինք հիմնադրամ, որը կնպաստի այնպիսի նախագծերի ֆինանսավորմանը, որոնք ուղղված են փողոցում ապրող եւ աշխատող երեխաների ու սոցիալապես անպաշտպան նորածին երեխաների սննդի պակասորդի վերացման ապահովմանը: Երբ նորածինի ծնողները արդարադատության տանը կստանան մանկական գրանցման փաստաթուղթը, միաժամանակ նրանց կտրվի հատուկ նվեր փաթեթ, որտեղ, այլ անհրաժեշտ նյութերի հետ միասին, կան վիտամիններ, որոնք անհրաժեշտ են UNICEF-ի չափորոշիչով սննդի պակասորդի վերացման համար»,- հիմնադրամի բացմանը հայտարարեց Թեա Ծուլուկիանին:

Հիմնադրամը բացվեց անցյալ շաբաթ Ղազբեգիում, Ֆրանսիա-Վրաստան առեւտրաարդյունաբերական պալատի ճաշկերույթին, որից հետո անցկացվեց աճուրդ:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

### ՍԿՍՎԵՑ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

*Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ) սկսել է 2016 թվականի խորհրդարանական ընտրությունների նախապատրաստումը:*

ԿԸՀ կայքում տեղ գտած հաղորդագրությունում նշված է, որ Վրաստանի առաջիկա խորհրդարանական ընտրություններին մասնակցել ցանկացող քաղաքական կուսակցությունները պետք է գրանցում անցնեն երկրի ԿԸՀ-ում:

Վրաստանում խորհրդարանական ընտրություններն անցկացվելու են 2016 թվականի աշնանը: Վրաստանի օրենսդիր մարմնում չներկայացված կուսակցությունները պետք է համապատասխան հայտարարությամբ դիմեն ԿԸՀ նախագահին, որից հետո, ներկայացնեն համակիրների ընտրական ցուցակները:

Կուսակցությունները պարտավոր են դա անել 60 օրվա ընթացքում: Քաղաքական կուսակցություններին, որոնք ցանկանում են տեղ զբաղեցնել օրենսդիր մարմնում, ԿՀԿ-ն կոչ է անում ժամանակին անցնել գրանցման համար անհրաժեշտ բոլոր ընթացակարգերը:

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

### ՄԱՏՈՒՑՎՈՂ ԳԱԶԻ ԾԱՎԱԼՆ ԱՎԵԼԱՆՈՒՄ Է

*Վրաստանի փոխվարչապետ, էներգետիկայի նախարար Կախի Կալաձեն, Ադրբեջան կատարած աշխատանքային այցի շրջանակներում, բանակցություններ վարեց Վրաստանին ադրբեջանական գազի ծավալի ավելացման հարցով:*

Պայմանավորվածության համաձայն, Ադրբեջանից Վրաստան մատուցվող բնական գազի ծավալը ավելացվում է գրեթե կես միլիարդ խորանարդ մետրով:

Այցի շրջանակներում, Վրաստանի էներգետիկայի նախարարը հանդիպում ունեցավ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ: Հանդիպմանը նշվեց Ադրբեջանի եւ Վրաստանի միջեւ էներգետիկական նախագծերի բարձր մակարդակը: Գոհունակություն հայտնվեց այդ ոլորտում համագործակցության առաջիկա զարգացման կապակցությամբ:

ՓՈԽԶԻՋՈՒՄ

### ԿԲԱԺՎԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ՈՒ ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

*Մարտի 1-ին, Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի Ադիգենի ավանում, տեղացի քրիստոնյա եւ մուսուլման բնակիչների միջեւ տեղի ունեցավ ընդհարում, որի արդյունքում մի քանի մարդ տուժել է:*

Իսլամ դավանող վերաբնակների եւ տեղացի քրիստոնյաների միջեւ խնդիրը ծագել է այն բանից հետո, երբ կրոնական գործերով Պետգործակալությունը մուսուլմաններին թույլատրել է առանձին գերեզմանոց հիմնել: Մինչ այդ, ուղղափառ քրիստոնյաներին եւ մուսուլմաններին հուղարկավորում էին մի գերեզմանոցում:

Որոշումը բողոք է առաջացրել քրիստոնյաների մոտ: Նրանց հայտարարությամբ, գերեզմանոցից հետո մուսուլմանները մտադիր են պահանջել մզկիթի շինարարություն, իսկ հետո կարող են ընդհանրապես պահանջել Ադիգենիից վտարել քրիստոնյաներին, քանի որ շրջկենտրոնում վերջին տարիների ընթացքում քրիստոնյա ընտանիքներում ծնված մեկ երեխային մուսուլման ընտանիքում ծնված երեք երեխա է ընկնում:

Հարցի կարգավորման համար, Վրաստանի կրոնական գործերով պետգործակալության ներկայացուցիչները այցելեցին Ադիգենի՝ հանդիպելու տեղացի բնակիչներին: Կայացած հանդիպումների արդյունքում, ձեռք է բերվել փոխզիջում: Որոշում է ընդունվել բացել քրիստոնյաների ու մուսուլմանների համար ընդհանուր գերեզմանատուն:



### ՆԵՐՈՒՄ 155 ԲԱՆՏԱՐԿՅԱԼԻ

*Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին ներում է շնորհել 155 բանտարկյալի: Ինչպես տեղեկացրեց համաներման հանձնաժողովի նախագահ Զվիադ Քորիձեն, ներման արժանացածներից 105-ը մարտի 2-ին ազատ արձակվեցին արգելավայրից: Քորիձեի խոսքերով, եւս 50 բանտարկյալների պատժաժամկետը կրճատվում է:*

*Ազատ արձակված բանտարկյալների թվում ութը կանայք են:*

### ԱՊՐԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԿ ԵՐՐՈՐԴՈՎ ՆՎԱԶԵԼ Է

*Ինչպես տեղեկացրել է Վրաստանի ազգային վիճակագրական ծառայությունը, Վրաստանի եւ Ադրբեջանի միջեւ արտաքին առեւտրային շրջանառությունը 2016 թվականի հունվարին, անցյալ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, 33 տոկոսով կրճատվել է եւ կազմել մոտ 53,3 մլն դոլար:*

*Ադրբեջանը Վրաստանի արտաքին առեւտրային գործընկերների մեջ զբաղեցնում է երրորդ տեղը՝ իր 10,1 տոկոս մասնաբաժնով:*

*2016 թվականի հունվարին Վրաստանից Ադրբեջան արտահանումը, անցյալ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, 87 տոկոսով նվազել է եւ կազմել 3,8 մլն դոլար կամ Վրաստանի ամբողջ արտահանման 3,1 տոկոսը: 2016 թվականի հունվարին, անցյալ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, 2,2 տոկոսով կրճատվել է նաեւ Ադրբեջանից Վրաստան արտահանման ծավալը, ինչը կազմում է Վրաստանի ներմուծման ամբողջ ծավալի 12,2 տոկոսը:*

### 63 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

*ԱՄՆ պետական դեպարտամենտի բյուջետային փաստաթղթերի համաձայն, 2017 թվականին ԱՄՆ-ը Վրաստանին հատկացնում է 63 միլիոն դոլար: Վերոնշյալ գումարը նպաստելու է «Ժողովրդավարության հաստատմանը, տնտեսական զարգացմանը, եվրատլանտյան ինտեգրմանն ու ռուսական ագրեսիայի հակադրմանը»:*

*Ինչպես նշված է վերոնշյալ փաստաթղթում, բազմամիլիոնանոց օգնությունն ուղղված կլինի «էներգաանվտանգության եւ ռուսական ազդեցության ներքո գտնվող բնակչության տնտեսական հնարավորությունների ընդլայնմանը»:*

### ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է ԳՐԻՊԻ ՎԻՐՈՒՍՈՎ ՎԱՐԱԿՄԱՆ 450 ԴԵՊՔ

*Հիվանդությունների վերահսկողության ազգային կենտրոնի պաշտոնական տվյալներով, լաբորատորիայի միջոցով հաստատվել է գրիպի 450 դեպք, որից 432-ը H1N1, իսկ 18-ը՝ H3N2 վիրուսով վարակվածներ են:*

*Վիրուսից մահացել է 22 մարդ, որից 21-ի մահվան պատճառը H1N1-ն է, իսկ մեկը՝ H3N2 վիրուսը:*

*Ինչպես հայտարարեց հիվանդությունների վերահսկողության ազգային կենտրոնի գիտական խորհրդի ղեկավար Պաատա Իմնաձեն, գրիպի կիզակետն արդեն հաղթահարվել է, թեպետ հիվանդության տարածումը ենթադրաբար կշարունակվի մինչեւ մարտի վերջը:*

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

# ՀԵՆՉԵԼ ՄԿՈՅԱՆ. «ԻՆՉ ՀԱՄԱՐ ԱՌԱՋՆԱՅԻՆԸ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՆ ԽՐԱԽՈՒՍՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՎՈՒՄՆ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

***Նալու պրակտիկան: Եկեք այս հարցազրույցը համարենք որպես յուրատեսակ հաշվետվություն: Ի՞նչ կարող եք ասել 2015 թվականին Նինոծմինդայում իրականացված աշխատանքների, սոցիալական եւ տնտեսական ոլորտում տեղ գտած փոփոխությունների, ենթակառույցների կարգավորման ուղղությամբ կատարած աշխատանքների մասին:***

- Նախ, ցանկանում եմ շնորհակալություն հայտնել ընձեռած հնարավորության համար,

ինչը թույլ է տալիս իմ նինոծմինդացիներին ներկայացնել սակրեբուլոյի եւ շրջանի բոլոր օղակների ջանքերով կատարված այն աշխատանքները, որոնք իրականացվել են անցյալ տարի:

Միանգամից ասեմ, որ թե' սոցիալական, թե' ենթակառույցային ոլորտներում տեղաշարժերն ավելի քան ակնհայտ են: Խոսքս վերաբերում է ինչպես այդ նպատակով հատկացված գումարների չափերին, այնպես էլ՝ կատարված աշխատանքների մասշտաբներին:

Տեղական ինքնակառավարման մարմինների հետ մեր համատեղ ջանքերի արդյունքում, անցյալ տարի տարածաշրջանային նախագծերի հիմնադրամից կարողացանք ստանալ շուրջ 1 միլիոն 700 հազար լարի: Այդ գումարով ճանապարհներն ասֆալտապատվեցին մունիցիպալիտետի այնպիսի խոշոր բնակավայրերում, ինչպիսիք են Գանձա, Հեշտիա, Սաթխա գյուղերը: Հավանաբար, հարկ է ավելացնել նաեւ շրջկենտրոն Նինոծմինդան, որտեղ ասֆալտապատման աշխատանքներ անցկացվեցին քաղաքի մի շարք փողոցներում: Առաջիկայում հիմնադրամի հետ մեր համագործակցությունը կընդլայնվի եւ ծրագրում ենք նոր հատկացումների շնորհիվ մունիցիպալիտետում իրականացնել մի շարք նոր նախագծեր:

***- Որքանով տեղեկացված ենք, Դուք ակտիվ մասնակցություն եք ցուցաբերել առանձին բնակավայրերում «Գյուղի աջակցության» ծրագրով նախատեսված առաջնահերթությունների ընտրության գործում, ի՞նչ կասեիք այդ ծրագրի շրջանակներում կատարված գործերի մասին:***

- Իրոք, թե' ես եւ թե' ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչները, մասնակցել ենք առանձին բնակավայրերի կողմից առաջնահերթությունների ընտրության գործին, մարդկանց պարզաբանել ծրարով հատկացված գումարները առավել նպատակահարմար օգտագործելու նրբությունները: Վերջին հաշվով, այդ ծրագրի շրջանակներում, մունիցիպալիտետի մասշտաբով հատկացված 543 հազար լարիով իրականացվեց շուրջ 40 նախագիծ: Փաստորեն ծրագրի շրջանակներում ծրագրված բոլոր նախագծերը, բացառությամբ մեկի՝ Գանձայի գյուղական ակումբի համար գույքի ձեռքբերումը չիրականացվեց, լրիվությամբ կատարվեցին: Ավելին, ջրամատակարարման համակարգը կարելի է լրիվությամբ կարգավորված համարել մոտ մեկ տասնյակ գյուղերում, մասնավորապես՝ Փոքր Գոնդուրայում, Ղուլալիսում, Հեշտիայում, Մեծ Արագյալում, Փոքր Արագյալում, Գանձայում, Գորելովկայում, Օրլովկայում, Սամեբայում, Փոքր Խանչալիում եւ այլուր:

Նույն ծրագրի շրջանակներում, արարողությունների տներ եւ ակումբներ վերանորոգվեցին Դիլիֆ, Ուչմանա, Օրոջալար, Սաղամո, Ջիգրաշեն, Մամզարա, Գանձա, Կաթնատու, Տամբովկա, Վլադիմիրովկա եւ մյուս գյուղերում:

Ավելացնեմ, որ ենթակառույցային նախագծեր իրականացվեցին նաեւ տեղական բյուջեի համաֆինանսավորմամբ: Այդ նպատակով, նախորդ տարիների համեմատությամբ, հատկացվեց աննախընթաց գումար՝ 1689840 լարի: Այդ գումարով իրականացվեց 36 նախագիծ, որ առնչվեցին գյուղերի ներքին ճանապարհների կարգավորմանը, արարողությունների տների վերանորոգմանը, ջրամատակարարման համակարգերի կարգավորմանը: Շուրջ 100 հազար լարի ծախսվեց մունիցիպալիտետի մարզական նշանակության կառույցների վերանորոգման ու շինարարության համար:

***- Ներկայիս սոցիալ-տնտեսական բարդ իրավիճակի պայմաններում, շատ ընտանիքներ օգնության կարիք ունեն: Ի՞նչ աշխատանքներ են կատարվել մունիցիպալիտետում այդ ուղղությամբ:***

- Այդ առումով եւս 2015 թվականին ծախսվեց աննախընթաց գումար՝ 256 հազար լարի: Դեռեւս անցյալ տարվա սկզբին, մունիցիպալային բյուջեի ձեւավորման ժամանակ, առանձնացրինք առանձին կետեր, որոնք պարտադիր կարգով ֆինանսավորվելու էին: Այդ կետերից էին անհետաձգելի վիրահատությունը, ստացիոնար բուժումը, դեղորայքի ձեռքբերումը, հաշմանդամների համար սայլակների գնումը, ծնողազուրկ երեխաների եւ բազմանդամ ընտանիքների օգնությունը: Բնականաբար, չանտեսվեցին նաեւ առաջին խմբի, ի ծնե հաշմանդամները, պատերազմի վետերանները, սոցիալապես անպաշտպան ընտանիքները, այդ ընտանիքներից բուհերում սովորող երիտասարդները: Առանձին օգնություն ցուցաբերվեց նորածին երեխաներ ունեցող ընտանիքներին:

***- Պարոն Հենզել, ի՞նչ կասեիք առաջիկայում ծրագրված աշխատանքների մասին:***

- Գուցե առաջին հայացքից վերը թվարկվածների ցուցակը տպավորիչ է, սակայն անկեղծորեն ցանկանում եմ ասել, որ առաջիկայում անելիքները շատ ավելի են: Մունցիպալիտետում, շատ է այն կրթօջախների, մանկապարտեզների, հասարակական նշանակություն ունեցող կառույցների թիվը, որոնք շտապ վերանորոգման կարիք ունեն, էլ չենք խոսում գյուղերը իրար կապող ճանապարհների մասին:

Քանի որ խոսք բացվեց ճանապարհների մասին, ապա ասեմ, որ վերջին մի քանի տասնյակ տարիների ընթացքում այս տարի վերջապես կարողացանք կարգավորել ձմեռային պայմաններում Նինոծմինդա-Ծալկա ճանապարհահատվածի Ռոդիոնովկա-Նարդեւան հատվածի երթեւեկության անխափանությունը: Հավանաբար գիտեք, որ այդ, այսպես կոչված, Թիքքար հատվածը այդ ճանապարհի աքիլլեսյան գարշապարն էր: Այս տարի մեզ հաջողվեց ընդհանուր ջանքերով լուծել այդ՝ նինոծմինդացիների համար առանձնակի նշանակալից հիմնախնդիրը: Չէ՞ որ այդ ճանապարհը վերջին 40 տարիների ընթացքում սովորաբար բացվում էր ապրիլի 5-10-ը: Այս ձմեռ այդ ճանապարհը գրեթե չի փակվել, եւ ապագայում էլ կանենք այնպես, որ մաքրենք ամենաշատ տեղացած ձյունն անգամ, ու այդ հատվածը չփակվի:

Շարունակելով առաջիկա անելիքների թեմա՝ նշեմ, որ լուրջ ջանքեր ենք մտադիր ներդնել վերջնականապես մունիցիպալիտետի բնակավայրերի գազիֆիկացումն ավարտելու ուղղությամբ: Հիշեցնեմ, որ մունիցիպալիտետի վարչական 10 միավորներից միայն յոթն է գազիֆիկացված, իսկ երեքում (Փոկա, Գորելովկա, Տամբովկա) այդ աշխատանքները անպայման իրականացվելու են:

Վերջում ընդգծեմ, որ իմ պատգամավորական պարտականության առաջնահերթայիններից մեկը համարում եմ մունիցիպալիտետի համար նոր ներդրումների ապահովումը, ինչը հնարավորություն կտա ընդլայնել գործող արտադրությունների ցանցը, հիմնել նոր արտադրություններ, որոնք, ինչ խոսք, կնպաստեն մունիցիպալիտետում ամենացավոտ հիմնախնդրի՝ գործազրկության մակարդակի նվազեցմանը, թե որքանով դա կհաջողվի իրականացնել, ցույց կտա ժամանակը:

*ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ*

ՖԻՆԱՆՍՆԵՐ

# ՆՈՂԱՐ ԽԱԴՈՒՐԻ. «ԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԴՐԱՄԸ ԼՐՋՈՐԵՆ ԿԱՄՐԱՊՆԴՎԻ»

(Սկիզբը՝ 2-րդ էջում)

յությունից բացի, ոչ մեկը չի ունենա ընկերության հարկային փաստաթղթերի հետ առնչվելու հնարավորություն եւ, միաժամանակ հարկային հարցով վեճի դեպքում, հարկատուի գույքը կարող է բռնագրավվել միայն դատարանի որոշմամբ:

Նշանակալից է նաեւ այն ենթակետը, ըստ որի, արտադրական միջոցների ներկրումն ազատվում է ավելացրած արժեքի հարկից (ԱԱՀ): Արտասահմանից սարքավորում ներկրող ընկերությունը կազատվի ԱԱՀ-ի վճարումից: Այն կմուծվի ավելի ուշ, երբ ընկերությունը սկսի ողջ ծանրաբեռնվածությամբ գործել ու շահույթ ստանա:

Վերոնշյալ առաջարկությունները, ըստ իս, բավականին հետաքրքիր են գործարարների համար, եւ դա, առաջին հերթին, գործարարության նկատմամբ կառավարության բարյացակամ վերաբերմունքի արտահայտությունն է:

***- Որքանո՞վ են այս բոլոր հարցերը համաձայնեցվել գործարար շրջանների հետ:***

- Բնականաբար, մենք խորհրդատվություններ ենք անցկացրել եւ անցկացնում ենք գործարարների հետ: Նշեմ, որ գործարարները բավականին շահագրգռված արձագանքեցին վերոնշյալ նախագծի կապակցությամբ: Դա բավականին հետաքրքիր միջոց է երկրում ներքին ներդրումների խրախուսման համար: Գործարարները պետք է, որ շահագրգռված լինեն միջոցների վերաներդրման եւ արտադրության ընդլայնման հարցում, որպեսզի առաջիկայում ստանան է՛լ ավելի մեծ շահույթներ, ստեղծեն լրացուցիչ արժեքներ, նոր աշխատատեղեր, ինչպես նաեւ օգտվել Եվրամիության հետ ազատ առեւտրի համաձայնագրով տրված հնարավորություններից:

***- Եթե բյուջետային եկամուտները կրճատվեն 300-400 միլիոն լարիով, ապա, ամենայն հավանականությամբ, պետության կողմից իրականացվող շատ ծախսեր եւս կկրճատվեն...***

- Մենք ունենք երեք տեսակի ծախսեր. առաջինը սոցիալական ծախսերն են, որոնք չեն կրճատվի: Ավելին, ծրագրված է կենսաթոշակն ավելացնել մինչեւ 180 լարի: Ապրիլից կավելացվի նաեւ ուսուցիչների աշխատավարձը:

Իրականացնում ենք նաեւ հիմնարար ծախսեր, որոնք նույնպես չեն կրճատվի, ավելին՝ դրանք կավելացվեն:

Կկրճատվի միայն ծախսերի երրորդ տեսակը՝ վարչական բյուրոկրատական ծախսերը:

***- Ստացված տեղեկատվության համաձայն, կառավարությունը մտադիր է թողարկել եվրապարտատոմսեր: Նման գործողության համար նախկին իշխանությունը խիստ քննադատության ենթարկվեց: Ինչո՞ւ կրկին բարձրացվեց այդ հարցը:***

- Մենք ակտիվ աշխատանք ենք իրականացնում միջազգային կազմակերպությունների հետ, որպեսզի ներգրավենք ռեսուրսներ Արժույթի միջազգային հիմնադրամից, Համաշխարհային բանկից, Եվրոպական ներդրումային բանկից, Ասիական ներդրումային բանկից եւ այլն: Մենք փորձում ենք միջոցներ ստանալ մեզ համար օգտավետ պայմաններով: Օրինակ, կազմակերպություններից մեկը մեզ առաջարկում է 0,5 տոկոսադրույքով 40 տարով նախատեսված վարկ: Այդ կապակցությամբ վարչապետը նշեց, որ, եթե այդ ռեսուրսը չբավարարի կամ այն չհաջողվի ստանալ, այդ դեպքում կծագի եվրապարտատոմսեր թողարկելու հարցը: Այնպես որ, նման տարբերակը հնարավոր է, թեպետ այն դեռեւս չի քննարկվում:

***- Ներկայումս բոլորիս անհանգստացնում է միայն մի հարց. ի՞նչ է սպասում ազգային տարադրամին՝ լարիին: Մի քանի օր առաջ այն, դոլարի համեմատությամբ, ընդհուպ մոտեցավ 2,5-ի բնագծին, եւ ոչ մեկը չի կարող ասել, թե ինչպիսին կլինի հետագա դինամիկան:***

- Վստահությամբ կարող եմ նշել, որ բյուջեն ոչ մի ազդեցություն չի գործում ազգային տարադրամի կուրսի վրա: Տարվա ընթացքում ծախսերը չեն կարող լինել հավասարաչափ ու միանշանակ: Գոյություն ունի հարկային օրացույց, եւ տարբեր ամիսներին բյուջետային ներդրումները լինում են տարբեր, թեպետ հիմնական ծախսերը՝ աշխատավարձն ու կենսաթոշակը, ողջ տարվա ընթացքում միանշանակ է: Հետեւաբար, տարվա տարբեր ժամանակահատվածներում ծախսերն ու եկամուտները միմյանցից տարբերվում են: Դրա համար էլ գոյություն ունեն ինչպես բյուջեն, այնպես էլ՝ ծագող պակասորդի մարման մյուս միջոցները:

Մեզ մոտ ազգային տարադրամի կուրսի տատանումը հիմնականում կախված է արտաքին գործոններից: Բոլորս քաջատեղյակ ենք, թե ինչ է կատարվում հարեւան երկրներում, որոնց թվում կան շատ ավելի հզոր էկոնոմիկայով երկրներ, թեպետ դրանք էլ չխուսափեցին իրենց տարադրամի կտրուկ տատանումներից: Ճիշտ է, վերջին ժամանակներս հարեւան երկրներում իրավիճակը փոքրիշատե կայունացավ, որոշակի հավասարակշռություն սահմանվեցին ներկրումների եւ արտահանումների ծավալների միջեւ, թեպետ Ռուսաստանից, Ուկրաինայից եւ Հունաստանից դրամական փոխանցումները շարունակում են նվազել: Տարադրամի կուրսի վրա կարեւոր ազդեցություն է գործում մեր կողմից արտահանվող ապրանքների գների նվազումը: Բնականաբար, այդ ամենն ազդեցություն է գործում Վրաստանի էկոնոմիկայի վրա: Վստահեցնում եմ, որ մենք լարիի կուրսի կտրուկ արժեզրկում չենք սպասում: Ավելին, հեռանկարում սպասում ենք մեր տարադրամի կուրսի ամրացում: Հավատացնում եմ, որ դա ասում եմ ոչ միայն ձեւի համար, այլ իրականում այդպես կլինի, եւ լարիի կուրսն անպայման կամրապնդվի:

*ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ*